Կարծիք

Վերոնիկա Աշոտի Թորոսյանի «Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Վերոնիկա Աշոտի Թորոսյանի «Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» ատենախոսությունը՝ քաղաքագիտական, միջազգային հարաբերությունների տեսությունների և տարածաշրջանային ուսումնասիրությունների միջդիսցիպլինար մոտեցմամբ վերլուծում է եվրասիական գաղափարախոսության ձևավորման և վերափոխման գործընթացները: Աշխատանքի արդիականությունը բխում է եվրասիական տարածքի աճող դերից՝ որպես մրցակցող և հատվող աշխարհաքաղաքական նախագծերի գոտի, ինչպես նաև Ռուսաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարությունների գաղափարախոսական հիմքերի նկատմամբ աճող հետաքրքրությունից: Ուսումնասիրությունն առանձնանում է իր գիտական նորույթով, քանի որ վերջին տասնամյակներում եվրասիականությունը դուրս է եկել տեսական և գաղափարական նեղ սահմաններից և աստիճանաբար վերածվել է այդ երկրների արտաքին քաղաքականության գործիքակազմի կարևոր տարրի՝ կիրառվելով ինտեգրացիոն և փոփոխվող աշխարհակարգի դիսկուրսիվ շրջանակավորման գործընթացներում: Այս համատեքստում եվրասիականության ռուսական և թուրքական հասկացությունների համեմատական վերլուծությունը բացահայտում է ոչ միայն մտավոր և փիլիսոփայական ավանդույթները, այլ նաև տարածաշրջանային ինքնության ինքնատիպ մոդելների առանձնահատկությունները և ինստիտուցիոնալացման արդյունքները: Այս տեսանկյունը թույլ է տալիս ուսումնասիրել եվրասիականությունը որպես բազմաշերտ և փոփոխական հասկացություն, որը հարմարվում է տարբեր ազգային և աշխարհաքաղաքական համատեքստերին:

Ատենախոսությունում ներկայացված է եվրասիականության ձևավորման և զարգացման պատմությունը, համեմատվել են եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը, վերլուծության են ենթարկվել դրանց համադրելի և հակադրելի կողմերը, քննարկվել է եվրասիականության գործիքայնացումը:
Աշխատանքը կազմված է երեք գլուխներից, ներածությունից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության ներածությունում հեղինակը հիմնավորել է հետազոտության թեմայի արդիականությունը, հստակ ներկայացրել է հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, սահմանել է ուսումնասիրության ժամանակագրական շրջանակը, ներկայացրել է կիրառված մեթոդաբանությունը, աշխատանքի գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը: Կատարվել է հետազոտության աղբյուրագիտական և գիտական հիմքի վերլուծություն, գնահատվել է թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակը հիմնավոր կերպով ներկայացրել է եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի ձևավորման ու զարգացման գաղափարական, պատմական և քաղաքական նախադրյալները Հետևողականորեն քննության է առնված ռուսական եվրասիականության փուլային զարգացումը: Առանձնացված են դրա երեք հիմնական փուլերը դասական, գումիլյովյան և neo-եվրասիականությունը: Հանգամանորեն վերլուծվել են յուրաքանչյուր փուլի տեսական առանձնահատկությունները, գաղափարական շարունակականության և փոխակերպման դրսևորումները, ինչպես նաև դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները: Նման մոտեցումը հնարավորություն է տվել պատկերացում կազմել ռուսական եվրասիականության գաղափարական զարգացման վերաբերյալ: Ուսումնասիրվել է Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիայում եվրասիականության տարածման նախադրյալներին և զարգացման առանձնահատկություններին: Հեղինակը դասակարգել է թուրքական եվրասիականության հիմնական ուղղություններն ու մոտեցումները, ներկայացրել դրանց ձևավորման և զարգացման ընթացքը, վերլուծել Թուրքիայում տարածված գաղափարախոսությունների ազդեցությունը թուրքական եվրասիականության ձևավորման վրա: Քննության են առնվել թուրքական եվրասիականության տարբերակների միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները: Ատենախոսության առաջին գլուխն ունի հստակ կառուցվածք և տրամաբանական հաջորդականություն, ինչը ձևավորում է ատենախոսության հաջորդող բաժինների համար անհրաժեշտ գիտավերլուծական հիմք:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը առանձնացրել և համադրել է եվրասիականության ռուսական և թուրքական տարբերակների հենքային գաղափարները՝ առանձնացնելով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Քննության են առնվել եվրասիական յուրահատուկ քաղաքակրթության, Եվրասիայի ժողովուրդների ընդհանուր պատմամշակութային հիմքի, հակաարևմտականության և գլոբալիզմի նկատմամբ քննադատական մոտեցումների գաղափարները՝ ցույց տալով դրանց տեղն ու նշանակությունը

եվրասիական հայեցակարգերում: Հեղինակը վերլուծել է ռուսական և թուրքական եվրասիականություններին բնորոշ քաղաքակրթական մոտեցումները, որոնց շրջանակներում Եվրասիան ներկայացվում է որպես ինքնուրույն քաղաքակրթական տարածք՝ առանձնահատուկ արժեքային և աշխարհաքաղաքական համակարգով: Գլխում առանձնակի ուշադրություն է դարձվել հակաարևմտականության գաղափարի և գլոբալացման նկատմամբ քննադատական դիրքորոշման դերին՝ որպես եվրասիական ինքնուրույն աշխարհաքաղաքական և քաղաքակրթական ուղու հիմնավորման կարևոր բաղադրիչների: Այս համատեքստում վերլուծության է ենթարկվել եվրասիական ինքնուրույն աշխարհաքաղաքական բևեռի ձևավորման տեսլականը և դրա մեկնաբանությունները ռուսական ու թուրքական հայեցակարգերում:

Հեղինակը քննության է առել նաև Եվրասիայի աշխարհագրական և աշխարհաքաղաքական սահմանների վերաբերյալ ռուսական և թուրքական մոտեցումները՝ բացահայտելով դրանց միջև առկա սկզբունքային տարբերությունները: Առանձին վերլուծության են ենթարկվել ազգայնականության բաց և փակ մոդելների դրսևորումները, դրանց ներառական կամ բացառող բնույթը, ինչպես նաև ազդեցությունը եվրասիական ինքնության ձևավորման գործընթացի վրա: Աշխատանքի երկրորդ գլուխն իրականացված է համեմատական վերլուծության հստակ մեթոդաբանությամբ և փաստական նյութի պատշաճ օգտագործմամբ:

Ատենախոսության երրորդ գլուխը ներկայացնում է եվրասիականության գաղափարների գործնական կիրառման և դրանց քաղաքական գործիքայնացման հիմնախնդրի քննությունը: Հեղինակը ցույց է տվել, թե ինչպես են եվրասիականության գաղափարները արտացոլվում Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ու ինտեգրացիոն նախաձեռնությունների գաղափարական հիմքերում: Որպես համեմատական ուսումնասիրության առանցքային օրինակներ ընտրված են Եվրասիական տնտեսական միությունը և Թյուրքական պետությունների կազմակերպությունը: Գլխում եվրասիականությունը քննարկվում է անդրազգայնության համատեքստում: Ատենախոսությունում այն դիտարկվում է որպես պետական սահմանները գերազանցող գաղափարական կառուցակարգ, որն ուղղված է քաղաքական, տնտեսական, մշակութային և ինքնութենական կապերի ձևավորմանը: Անդրազգայնության տեսական մոտեցումների կիրառմամբ հեղինակը վերլուծել է եվրասիական ինտեգրացիոն նախագծերի դերը՝ բազմակողմ համագործակցության խորացման, ընդհանուր մշակույթի սահմանման և տարածաշրջանային ինքնությունների ձևավորման գործընթացում: Գլխի կարևոր բաղադրիչներից է նաև ռուս-թուրքական հարաբերությունների քննությունը

եվրասիականության տեսանկյունից: Հեղինակը համեմատական վերլուծության է ենթարկել երկու պետությունների միջև համագործակցության և մրցակցության հնարավորությունների վերաբերյալ ռուսական և թուրքական եվրասիականության ներկայացուցիչների մոտեցումները՝ բացահայտելով այդ հարաբերությունների տեղն ու նշանակությունը եվրասիականության տարբեր մեկնաբանություններում:

Հետազոտության երրորդ գլուխը կազմված է տեսական և կիրառական մակարդակների համադրմամբ, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջական գնահատելու եվրասիականության գաղափարների գործիքայնացման հնարավորությունը և այդ գաղափարների ազդեցությունը Ռուսաստանի ու Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության վրա:

Եզրակացությունում հեղինակը համակարգված կերպով ամփոփել է իրականացված հետազոտության հիմնական արդյունքները:

Վերոնիկա Թորոսյանի ներկայացրած ատենախոսությունը ունի գիտական և կիրառական կարևորություն, հստակ ձևակերպված արդիականություն, պարունակում է գիտամեթոդական նորույթ: Ուսումնասիրության դրույթները կարող են կիրառվել ՀՀ արտաքին քաղաքականության համապատասխան ուղղությունների մշակման, միջազգային հարաբերությունների տեսական և կիրառական հետազոտությունների, ինչպես նաև տարածաշրջանային քաղաքական դինամիկայի գնահատման և մեկնաբանման գործընթացներում: Դրանք կարող են կիրառվել նաև քաղաքագիտական և միջազգային հարաբերությունների տեսությունների ուսուցման, տարածաշրջանային ուսումնասիրությունների դասավանդման մեջ՝ նպաստելով ուսանողների քննադատական և համեմատական վերլուծության կարողությունների զարգացմանը:

Աշխատանքը շարադրված է բարձր գիտական մակարդակով և առանձնանում է թեմայի խորքային ուսումնասիրությամբ, սակայն նշանակալի կշահեր.

1. եթե համառոտ անդրադարձ կատարվեր եվրասիականության նկատմամբ գլոբալ ուժային կենտրոնների՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Չինաստանի և Իրանի արտաքին քաղաքական ընկալումների և մոտեցումներին, ինչը հնարավորություն կտար ավելի ամբողջական բացահայտելու եվրասիականության ռուսական և թուրքական մոդելների կենսունակությունն ու մրցունակությունը միջազգային հարաբերություններում, ինչպես նաև գնահատելու դրանց ինտեգրացիոն և աշխարհաքաղաքական չափումները: Կարծում ենք, որ այս մոտեցմամբ հնարավոր կլիներ ավելի հստակ պարզաբանել, թե որքանով են այդ մոդելները հաջողում ներկայիս ուժային մրցակցության պայմաններում և ինչ

սահմանափակող գործոնների են բախվում գլոբալ և տարածաշրջանային փոխազդեցությունների համատեքստում:

2. Աշխատանքի երրորդ գլուխը, որը նվիրված է եվրասիականության գաղափարների գործածմանը Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերում, ընդհանուր առմամբ ներկայացնում է արժեքավոր վերլուծական նյութ: Միաժամանակ, այն կարող էր ավելի խորքային բնույթ ստանալ, եթե ընդգծվեր եվրասիական գաղափարների կիրառման գործնական ձեռքբերումները հետխորհրդային տարածքում, հատկապես Կենտրոնական Ասիայի պետությունների քաղաքական կողմնորոշումների և ինտեգրացիոն ռազմավարությունների համատեքստում: Նման մոտեցումը հնարավորություն կտար առավել հստակ գնահատել եվրասիականության քաղաքական և տնտեսական արդյունավետությունը, ինչպես դրա հարմարվողականությունն ու կառուցվածքային ճկունությունը արձանագրված արդյունքների, ընդլայնման հեռանկարների և սահմանափակումների տեսանկյունից:

3. Աշխատանքի առանձին հատվածներում կարելի է նկատել խմբագրական բնույթի փոքր վրիպակներ: Ցանկալի կլիներ նաև որոշակի միասնականություն ապահովել օտարալեզու եզրույթների և անվանումների հարցում:

Այստեղ, նշված դիտարկումները բացարձակ չեն նվազեցնում հետազոտության գիտական արժեքը: Հեղինակի ներդրումը թեմայի համապարփակ վերլուծությանը էականորեն հարստացնում է ոլորտի տեսական և կիրառական ուսումնասիրությունները: Կարծում ենք, որ Վերոնիկա Աշոտի Թորոսյանի «Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին և դրա հեղինակը արժանի է հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Արևելագիտության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ
Նազելի Նավասարդյան

3 հուլիսի 2026 թ.

Նազելի Նավասարդյանի ստորագրությունը հաստատում եմ:

Արևելագիտության ինստիտուտի գիտքարտուղար՝ պ.գ.թ. Ե. Հարությունյան